

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ջանֆիդա
գյուղական համայնքի ավագանու 2017
թվականի հունվարի 15-ի N 02 որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021թթ.
ՀՆԳԱՄՅԱ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմեց՝ համայնքի ղեկավար Կ. Ղորղանյան
Ջանֆիդա 2016թ.

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

1. Ներածություն

Սույն մեթոդաբանությունը սահմանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ, Ծրագիր) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը և նպատակաուղղված է համայնքի կայուն զարգացումն ապահովող չափելի արդյունքների սահմանմանը և միջոցառումների նախանշմանը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանը անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են

ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանում ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Ջանֆիդա համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Ջանֆիդա համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ միջնակարգ դպրոցում, մանկապարտեզում, մշակույթի տանը, բուժ-ամբուլատորիայում, փոստում, գիտահետազոտական ինստիտուտներում, տասնյակ արտադրական ձեռնակություններում, առևտրի սպասարկման օբյեկտներում:

Համայնքում 2017-21թթ նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացում, փողոցային լուսավորության անցկացում, փողոցների ասֆալտապատում և փոսալցում, ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտերի բարեկարգում, կանգառների պատրաստում, խմելու և ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում:

Խիստ կարևորություն է տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, մանկապարտեզ-դպրոցի մակարդակներով, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու

խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Ծրագրիը մշակմանը, քննարկման ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, փոստի, բուժ ամբուլատորիայի և համայնքի տասնյակ հիմնարկ ձեռնարկությունների աշխատակազմերը ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքը գտնվում է Արաքսի ձախ ափին, մարզկենտրոնից հեռու է 13 կմ., ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: Ջանֆիդա գյուղը սահմանակից է Փշատավան, Նալբանդյան, Այգեշատ, Արմավիր և Նոր Արտագերս գյուղերին: Ոռոգման ջուրը ստանում է հիմնական Արաքս գետից, իսկ համայնքի բնակչությանը խմելաջուրը մատակարարում է 3 /երեք/ խորքային արտեզյան հորերի միջոցով:

Գյուղի կլիման խիստ կոնտինենտալ /անբարենպաստ/ է, առանձին տարիներին ձմռանը ցրտերը հասնում են -30 C-ից ցածր, իսկ ամռան ամիսներին հասնում է + 40 C :

Պարբերաբար գրանցվում են կարկտահարության դեպքեր, ինչպես նաև ուշ գարնանային ցրտահարություններ, հորդառատ անձրևներ, որոնց հետևանքով բնակչությունը կրում է բերքի զգալի կորուստներ: Սակայն շուրջ 6 տարի է, որ համայնքի տարածքում տեղադրվել են 10 /տասը/ հակակարկտային կայաններ, որոնց օգուտը հողատերերը զգացել են:

Համայնքն ունի 806 ընտանիք, 1486.5 հա հողատարածք, համայնքը 100 տարեկան է:

Ժողովրդագրություն

Համայնքն ունի 3488 բնակիչ, այդ թվում`

h/h	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	1722
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	49,3
2	Կանայք	1766
	Այդ թվում կանայք կազմում են բնակչության %	50,7
3	Թոշակառուներ	255
4	Փախստականներ	-
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
7	Հաշմանդամներ	88

8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	65
9	Զոհվածների ընտանիքներ	6
10	Աշխատունակ բնակչության թիվը	2010
11	Աշխատանք ունեցողների թիվը	1940
12	Գործազուրկներ	70
13	Գրանցված ընտրողների թիվը	2400
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	806

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 78.120 հազ.քմ, 651-ը առանձնատներ են՝ 78.82 հազ.քմ մակերեսով: Համայնքում կան 37 կիսակառույց առանձնատներ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարելի կառուցել առանձնատներ:

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքում հողի սեփականաշնորհման գործընթաց չի իրականացվել:

h/h	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի հողային տարածքը	1486.5
2	Գյուղատնտեսության հողեր	1027.3
3	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	12.68
4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	10.49
5	Հատուկ պահպանվող տարածքներ / այդ թվում պատմական և մշակութային հողեր	50.66
6	Հատուկ նշանակության հողեր	37.1
7	Ջրային տարածք	13.1
8	Բնակավայրի տարածք	335.17

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքը 1915 թ. եղեռնի հետևանքով գաղթել են Արևմտյան Հայաստանից՝ Մուշից, Ալաշկերտից, Վանից, Հին Բայազետից, Սուրմալույից, Դիադինից և այլ գավառներից:

Ջանֆիդա գյուղը Խորհրդային Հայաստանում առաջիններից էր, որտեղ 1968 թվականին կառուցվեց Հայրենական Մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին նվիրված հուշարձան կոթող, որի հեղինակն է հայ նշանավոր քանդակագործ Արա Սարգսյանը:

Գյուղի կենտրոնում համայնքի բնակիչ՝ բարերար Արթուր Կարապետյանի ընտանիքի կողմից 2014 թվականին բացվել է Սուրբ Կարապետ եկեղեցին:

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ՝ բանջար- բոստանային կուլտուրաների մշակությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ:

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը 1996 թվականից անվանակոչվել է համագյուղացի, Արցախյան պատերազմում զոհված Էդվարդ Դաշտոյանի անվամբ: Վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում գտնվող դպրոցում սովորում են 350 աշակերտներ: Ջանֆիդայի միջնակարգ դպրոցն ունի 63 աշխատող, որից 45 մանկավարժներ, որոնց 95 %-ը բարձրագույն կրթությամբ:

Գյուղը ունի մեկ մանկապարտեզ, որը 1999 թվականին անվանակոչվել է Սպարապետ Վազգեն Սարգսյանի անունով, ունի 3 /երեք/ խումբ և հաճախում են 88 երեխա:

Համայնքի ենթակայության կառույց է <ՋԱՆՖԻԴԱ ԱԿ> ՓԲԸ-Ն 8 /ութ/ աշխատակիցներով: Այն համարվում է նաև ընտանեկան բժշկության կենտրոն:

Գյուղը ունի մեկ մշակույթի տուն, որը գտնվում է անմխիթար վիճակում և չի գործում:

Շուրջ 25.0 կմ երկարությամբ գազատար խողովակաշար է անցկացվել, 255 բնակարաններ վերագազիֆիկացվել է, կառուցվել է երկու գազամատակարարման կայան /թ Հ կ /:

Խմելու ջրի և ջրագծերի սպասարկման աշխատանքները ամբողջովին կատարվում է համայնքի բյուջեի հաշվին:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	Կատ-ող.
1.	Հողի հարկ	8579.5	4799.9
2.	Գույքահարկ	7150.0	7577.4
3.	Տեղական տուրք	340.0	10.0
4.	Տեղական վճար	250.0	0
5.	Հողի վարձակալության վճար	350.0	430.7
6.	Գույքի վարձակալության վճար		
7.	Ծառայությունների մատ. վճարներ		
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	51394.5	51394.5
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիա	451.0	451.0
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	538.2	538.2
11.	Հողի օտարումից եկամուտ		
Ընդամենը		69054	65202.5

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	Կատ-ող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	26993.3	26162.6
2	Հանգիստ, մշակույթ և կրոն		
3	Սոցիալական պաշտպանություն	7075.0	7075.0
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2574.0	2097.2
5	Նախադպրոցական կրթություն	14150.0	14150.0
6	Մշակույթ, սպորտ, կրոն	3200.0	3062.6
7	Աղբահանում	1524.0	1343.0
8	Բնակ. կոմունալ տնտեսություն	12800	1027.4.0
9	Վարչական սարքավորումներ	2900.0	0
11	Կապիտալ նորոգումների ծախսեր	2737.7	721.0
12	Շենքերի և շին. կառուցում		
Ընդամենը		74354.0	65284.8

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

2010թ Ջանֆիդա համայնքում „Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ–Հայաստան,, գրասենյակի կողմից ֆինանսավորվող „Ջրից դեպի շուկա,, ծրագրի շրջանակներում իրականացվել է „Ոռոգման ջրի ներտնտեսային կառավարում,, թեմայով եռօրյա դասընթացներ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի շուրջ 86 ընտանիքներ ծանոթացան ժամանակակից գյուղատնտեսական նորամուծություններին, բերվեցին աշխարհի առաջադեմ երկրերի փորձը, ծանոթացրեցին թունաքիմիկատների ազդեցության և նրանց ճիշտ օգտագործման դրույթներին, տրվեց համապատասխան սերտիֆիկատներ: Արդյունքում համայնքի բնակիչների գիտելիքները նորացան, մոտեցումը գյուղատնտեսական աշխատանքների և մշակությունների նկատմամբ փոխվեցին և որոնք ներդրվեցին իրենց տնամերձերի և այգիների մշակման գործում:

Ջանֆիդա համայնքում բնակչության բուժսպասարկման աշխատանքները բարելավելու նպատակով, համաշխարհային բանկը պետական ծրագրի շրջանակներում 2002 թվականին կառուցել է բուժ- ամբուլատորիա ներդնելով 42.0 մլն. ՀՀ դրամ, որի 10%-ը համայնքի բյուջեյի հաշվին:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչների բուժ սպասարկման աշխատանքները դրվեցին ամուր հիմքերի վրա, բոլոր պրոֆիլակտիկ ստուգումներն ու պատվաստումները կատարվում են բարեկարգ միջավայրում, հիվանդների ընդունելությունը և սպասարկումը կատարվում է բավարար:

Ջանֆիդա համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերը և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը համայնքի զարգացմանը կխթաներ/ սակայն դեռևս այն նախատեսված չէ:

Համայնքի ֆինանսական իրավիճակի

նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021 թթ սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

h/h	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Ժամկետ	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ. ռամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները					Կատարման տեսակ	Ճանաչում
				համայնքի բյուջե	դրոսր կազմակ	առ/անտ. ուղծե. և	2017թ. ծավալը ֆին. միջոց	2018թ. ծավալը ֆին. միջոց	2019թ. ծավալը ֆին. միջոց	2020թ. ծավալը ֆին. միջոց	2021թ. ծավալը ֆին. միջոց		
1.	Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասի գիշերային լուսավորության անցկացում/մ/	1200	3 000	3 000	-	-	600	600	600	600	600	համայնքի ղեկավար	
2.	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում փոսա-լցում /քառ. մ/	1400	2 500	2 500	-	-	500	500	500	500	500	համայնքի	
3.	Ասֆալտապատում /քառ. մ/	1000	5 000	5 000	-	-	1 000	1 000	1 000	1 000	1 000	համայնք	
4.	Համայնքում կանգառների պատրաստում /հատ/	3	1 500	1 500	-	-	500	500	500	-	-	համայնքի	
5.	Համայնքի նոր թաղամասի գազի ֆիկացում /մետր/	350	3 000.	3 000.	-	-	1 000	500	500	500	500	համայնքի	

2.5. Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Ջանֆիդա համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Հանայքում առկա է գյուղատնտեսական նշանակության տասնյակ հեկտարներով վարելահողեր, որոնք ոռոգման ջրի լիարժեք առկայության դեպքում կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատատեղեր՝ կբարելավվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Համայնքի մշակույթի տան անմխիթար վիճակը թույլ չի տալիս կազմակերպելու սպորտային և մշակույթին վերաբերվող միջոցառումներ: Ցանկալի է նաև ունենալ վոլեյբոլի դաշտ, բարեկարգել՝ վերանորոգել եղած ֆուտբոլի դաշտը, համայնքում՝ երիտասարդության շրջանում ակտիվ մշակութային և մարզական կյանքը, լիարժեք մասսայականացնելու նպատակով:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվին խմբակներ, դասընթացներ, կկազմակերպվեր զբոսանքներ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին՝ դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը ավելի նպատակային դարձնելու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը՝ հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար եղած սպորտային՝ ֆուտբոլի, կարատեի պարապմունքներից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել՝ կազմակերպել վոլեյբոլի, վազբի, բոքսի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչներին , ուլքեր ունեն տնամերձ հողամասեր, ցանկանում են կառուցել բնակելի

տներ, փաստաթղթերի ստացումը, որը վերաբերվում է թույլտվություններին՝ դարձնել էլ ավելի դյուրին և հասանելի:

Համայնքի նորակառույց թաղամասի գազաֆիկացման աշխատանքների ավարտին հասցնելը:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը՝ հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների

և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի թույլ կողմերը

1. Համայնքի գյուղ նշանակության հողերի որշակի հողակտորների անմշակ լինելը:
2. Սոցիալապես անապահով ընտանիքների ֆինանսական իրավիճակը /ովքեր ընդգրկված են „Փարոս“, համակարգում/:
3. Համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման անհրաժեշտությունը, երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգման խնդիրը:
4. Համայնքի ոռոգման առուներում բետոնյա կիսախողովակներ տեղադրելու անհրաժեշտությունը /փոխել հողային հունով առուները/:

5. Համայնքում կանաչ գոտիների ավելացումը:
6. Երիտասարդական ծրագրերի իրականացման ակտիվության բարձրացումը:
7. Աշխատատեղերի անհրաժեշտությունը:

Հնարավորությունները

1. Զերմոցային տնտեսության զարգացում:
2. Խաղողագործության, պտղաբուծության զարգացում:

Մպատնալիքները

1. Հողի հարկի գանձումների դժվարություններ, որը կապված է համայնքից երկարատև ժամանակով բացակայողների հետ, համայնքի բնակիչների անվճարունակության հետ:
2. Խմելու ջրի ջրամբարի վերակառուցում:
3. Փողոցների ասֆալտապատում, վերանորոգում:

3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Ջանֆիդա համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացման արդյունքում՝ կզարգացվեն ջերմոցային տնտեսության՝ 1.9 հա, որտեղ կաճեցվեն լոլիկ, պղպեղ, համեմունքային կանաչի, վարունգ : Նշված աշխատանքների կատարման համար կներդրվի 80 000 000: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, կավելանա բնակչի իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը:

Նոր թաղամասերի կենտրոնական փողոցների և գիշերային լուսավորության անցկացման, ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման, նոր թաղամասերի գազիֆիկացման, խմելու ջրի ներքին ցանցի լիակատար նորոգման, ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգման, ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի նորոգման համար համայնքի բյուջեից կծախսվի 30.5 մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվացքով:

Համայնքի զարգացման հնգամյա զարգացման իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10%-ի աճ իսկ ոռոգման համակարգի

վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 25%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թիվը` 10% :

Համայնքի սեփական եկամուտների աճը` 12.0%:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ` 1 %:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակ

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 1

, Փողոցների գիշերային լուսավորության անցկացում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը		Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		-	600 000	600 000	600 000	600 000	600 000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016			2017	2018	2019	2020	2021
				200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016			2017	2018	2019	2020	2021
				400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում 1.2. Լարերի, մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 1 000 000 Կապիտալ ծախսեր` 2 000 000 Ընդհանուր բյուջեն` 3 000 000							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում							
Ծրագրի հիմնական	Հանայնքի բնակիչները							

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում նոր թաղամասերի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 2

Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման Ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		200 000	200 000	200 000	200 000	200 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյուֆի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 Ընդհանուր բյուջեն՝ 2 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճանապահների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման , ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո						

կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 3

, Ասֆալտապատում ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	10 00 000	10 00 000	10 00 000	10 00 000	10 00 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		600 000	600 000	600 000	600 000	600 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյուֆի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փոում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2 000 000 Կապիտալ ծախսեր՝ 3 000 000 Ընդհանուր բյուջեն՝ 5 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների փոսալցման , ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային						

հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 4

, Գազաֆիկացում ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի նոր թաղամասերի գազիֆիկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	1 000 000	500 000	500 000	500 000	500 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		600 000	300 000	300 000	300 000	300 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ձյուֆի, մանրախճի,ավազի ձեռք բերում</p> <p>1.2. Տեխնիկայի վարձակալում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ասֆալտի փռում</p> <p>2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր `1 200 000</p> <p>Կապիտալ ծախսեր`1 800 000</p> <p>Ընդհանուր բյուջեն`3 000 000</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի նոր թաղամասեր գազիֆիկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքի նոր թաղամասերի գազիֆիկացման արդյունքում նորաստեղծ երկու թաղամասերում նորակառույց անհատական տները կգազաֆիկացվեն, նորմալ հունով կգնա տների լոկալ ջեռուցման անցկացման հարցերը, կբարելավվի կենցաղային պայմանները, կբարձրան բնակչության կենցաղային հարցերի կարգավորման նկատմամբ բավարարվածությունը և տրամադրությունը:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 5

, Խմելու ջրի ներքին ցանցի նորոգման ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խմելու ջրի ներքին ցանցի նորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	500 000	500 000	500 000	500 000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		300 000	300 000	300 000	300 000		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խողովակների ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. ավազի ձեռք բերում 2.2 Խողովակների մոնտաժում, փոսացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 800 000 Կապիտալ ծախսեր՝ 1 200 000 Ընդհանուր բյուջեն՝ 2 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Խմելու ջրի ներքին ցանցի նորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում խմելու ջրի ներքին ցանցի լիակատար նորոգման արդյունքում խմելու ջուրը կմատակարարվի շուրջօրյա, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, բավարարվածությունը և տրամադրությունը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 6

Ֆուտբոլի դաշտի նորոգում Ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ֆուտբոլի դաշտի նորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	600 000	600 000	600 000	600 000	600 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		200 000	200 000	200 000	200 000	200 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Ավագի ձեռք բերում 1.2. Փոսայցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2 Կանաչապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 Կապիտալ ծախսեր՝ 2 000 000 Ընդհանուր բյուջեն՝ 3 000 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում ֆուտբոլի դաշտի մասնակի նորոգմամբ կբարելավվի ֆիզիկական կուլտուրայի զարգացումը հատկապես «ֆուտբոլ», սպորտաձևի ուղղությամբ, առողջ ապրելակերպի խրախուսման համար նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել կազմակերպել հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ 7

, Ոռոգման ջրատարի նորոգման Ե
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման ջրատարի նորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	300 000	300 000	300 000	300 000	300 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	100 000	100 000	100 000	100 000	100 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
-		200 000	200 000	200 000	200 000	200 000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Տեխնիկայի վարձակալում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 Ընդհանուր բյուջեն՝ 1 500 000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի նորոգման						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-21թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p style="text-align: center;">Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի նորոգման արդյունքում ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը:</p>						

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի տարեկան ընդհանուր բյուջեն 71854.5 հազ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտներ 20460.0 հազար դրամ կամ 28.5 տոկոս:

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Մերձավան համայնքում ունի հետևյալ պատկերը.

h/h	եկամուտների տեսակը	2016 վիստացի	2017 նախատեսվ ած	2018 նախատեսվ ած	2019 նախատեսվ ած	2020 նախատեսվ ած	2021 նախատեսվ ած
1.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	68515.8	71854.5	75870.0	81470.0	88280.0	93810.0
Ա	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	16669.5	20460.0	20870.0	21470.0	22780.0	23810.0
Ա.1	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	-	-				
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	16319.5	19810.0	20170.0	20770.0	21980.0	22990.0
1.1	Հողի հարկ	8579.5	11390.0	11500.0	11890.0	12000.0	12500.0
1.2	Գույքահարկ	7150.0	7950	8200.0	8400.0	9500.0	10000.0
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկ, եկամուտներ	-	-	-	-	-	-
2	ՏՈՒՐՔԵՐ	-	-	-	-	-	-
2.1	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-
2.2	Տեղական տուրքեր	340.0	470.0	470.0	480.0	480.0	490.0
3	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	600.0	650.0	700.0	700.0	800.0	820.0
3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	350.0	400.0	400.0	400.0	400.0	400.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ						
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության մջոցների կիրառումից եկամուտներ	-	-	-	-	-	-
3.4	Տեղական վճարներ	250.0	250.0	300.0	300.0	400.0	420.0
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ						
Ա.2	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	-4900.0	-4900.0	-5000.0	-6000.0	-6500	-7000.0
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ/ԴՐԱՄԱՇՆ ՈՐՉ/	51671.3	51394.5	55000.0	60000.0	65500.0	70000.0
Բ.1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	175.0	-	-	-	-	-
Բ.2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	-	-	-	-	-	-